# ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը Ապրիլի 2014թ.*

## ՀԱՂՈՐԴՈՒՄ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Տ. ՉԱԼԱԲՅԱՆ/*

*ԹԻՎ 1-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով ֆինանսատնտեսագիտական բաժնի կոցմից ներկայացված վերլուծությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69 և <Բյուջետային համակարգի մասին> օրենքի 35 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է՝

- Ըստ ստորև բերված վերլուծության համայնքի 2014 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականն ընդունել ի գիտություն:

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 103274.1 | 5481.4 | 108755.5 |
| Ծախսային մաս | 59956.7 | 5980.0 | 65936.7 |

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի

*ԿՈՂՄ-14* *ԴԵՄ-0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՎՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը Ապրիլի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2014թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34/4 հոդվածների պահանջներով համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին),համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին ՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
  - ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

/հազ.դրամ/

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 429514,9 | 25000,0 | 429514,9 |
| Ծախսային մաս | 429514,9 | 48511,4 | 453026,3 |
| Դեֆիցիտ | ------ | -23511,4 | -23511.4 |
| Պահուստային ֆոնդ | 25000,0 | | |

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

*ԿՈՂՄ-14* *ԴԵՄ-0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

## <ԱՇՏԱՐԱԿԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ> ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/*

## *N 3-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ և 11-րդ կետերով, համայնքի ավագանին՝*

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հանդես գալ «Աշտարակի միջհամայնքային միավորում» համայնքների միության հիմնադիր:
2. Հաստատել «Աշտարակի միջհամայնքային միավորում» համայնքների միության կանոնադրությունը:
3. Միության կազմում, որպես պատվիրակ (լիազորված անձ) ընտրել Արմեն Վաչեի Անտոնյանին (անձնագիր AN0265381, տրվ. 16.11.2012թ. 029-իկողմից):
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

**ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ <ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ> ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

***N 4-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով <Աշտարակի քաղաքային մշակույթի տուն> ՀՈԱԿ-ի տնօրեն Վրեժ Խաչատրյանի առաջարկությունը /18.03.2014թ. թիվ 01/, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. <Աշտարակի քաղաքային մշակույթի տուն> ՀՈԱԿ-ի խմբակների գործունեության ծախսերն ապահովելու նպատակով հաստատել ըստ խմբակների վարձաչափերի հետևյալ փոփոխությունները.

- դիզայն - 5000 դրամ
- թատրոն - 4000 դրամ
- նկարչություն - 3000 դրամ
- պար - 3000 դրամ
- կիթառ - 8000 դրամ
- վոկալ – 3000 դրամ
- դաշնամուր – 3000 դրամ
- ասմունք – 2000 դրամ

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՎՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՂՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

***N 5-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Աշտարակ քաղաքի Մուղնի թաղամասի բնակիչ Հարություն Նորիկի Միքայելյանի դիմումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <Գույքահարկի մասին> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ ենթակետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ քաղաքի Մուղնի թաղամասի բնակիչ Հարություն Նորիկի Միքայելյանի 800 019 ՀՀ դրամ գույքահարկից զիջել՝ 188 957 ՀՀ դրամ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 19.02.2014Թ. N 25-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

***N 6-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 219.1 հոդվածով, հիմք ընդունելով Աշտարակի քաղաքապետի 19.02.2014թ. N 25-Ա կարգադրության 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Աշտարակի քաղաքապետի 19.02.2014թ. N 25-Ա կարգադրութունը /կցվում է/:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2014թվականի N 25-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 219.1, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32/17 հոդվածների պահանջներով՝*

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.**

1. Ստեղծել վարչական հանձնաժողով 7 հոգուց, հետևյալ կազմով՝

- *Գևորգ Եղիազարյան - հանձնաժողովի նախագահ*
- *Տիգրան Չալաբյան - հանձնաժողովի անդամ*
- *Սուսաննա Ղազարյան - հանձնաժողովի անդամ*
- *Մակար Հովհաննիսյան - հանձնաժողովի անդամ*
- *Աննա Տոնյան - հանձնաժողովի անդամ*
- *Կարեն Հովեյան - հանձնաժողովի անդամ*
- *Աիդա Ազիզյան - հանձնաժողովի քարտուղար*

2. Հանձնաժողովի նախագահին /Գ. Եղիազարյան/

- Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել գործող կարգին համապատասխան, սահմանված ժամկետներում քննարկել ստացված գործերը և սեղմ ժամկետներում պատասխանել իրավասու մարմիններին:

3. Հանձնաժողովի կազմը ներկայացնել ավագանու հաստատմանը:

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ԱՐՄԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ**

19.02.2014թ.
ք.Աշտարակ

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*14-ը ապրիլի 2014թ.*

## ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

***<u>N 7-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով 24.02.2011թ. ՀՀ Կառավարության N164 որոշումը, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1.Հաստատել Աշտարակ համայնքի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը.

- *Գևորգ Եղիազարյան-հանձնաժողովի նախագահ*
- *Արդա Ազիզյան-հանձնաժողովի քարտուղար*
- *Գևորգ Սարգսյան-հանձնաժողովի անդամ*
- *Կարեն Շահազիզյան-հանձնաժողովի անդամ*
- *Ստյոպա Քասյան-հանձնաժողովի անդամ*
- *Անահիտ Գևորգյան-հանձնաժողովի անդամ*
- *Լիանա Խեչանյան-հանձնաժողովի անդամ*
- *Աստղիկ Աղաբաբյան-հանձնաժողովի անդամ*
- *Աննա Տոնյան-հաձնաժողովի անդամ*
- *Սարիբեկ Օվոյան-հաձնաժողովի անդամ*
- *Մուշեղ Տաշչյան-հաձնաժողովի անդամ*
- *Տիգրան Գալստյան-հաձնաժողովի անդամ*
- *Վահագն Մկրտչյան-հաձնաժողովի անդամ*

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՊԵՍ <ԱՆՀԱՅՏ> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

## *N 8-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. հմ.1398-Ն որոշմամբ համայնքին փոխանցված /253-014/ 605քմ, /012-105/ 200քմ, /012-106/ 378.6քմ, /012-107/ 237.6քմ, /012-108/ 401.4քմ, /042-010/ 348.8քմ, /042-011/ 425.6քմ ծածկագրերում գտնվող բնակավայրերի նշանակության հողատարածքները փոխանցվել են որպես /անհայտ/ ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողատարածքները հանդիսանում են համայնքային սեփականություն, հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. հմ. 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը,ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32 հոդվածի 17 կետի, 38 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող (ծածկագրեր՝ /253-014/ 605քմ, /012-105/ 200քմ, /012-106/ 378.6քմ, /012-107/ 237.6քմ, /012-108/ 401.4քմ, /042-010/ 348.8քմ, /042-011/ 425.6քմ) բնակավայրերի նշանակության հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 13* *ԴԵՄ – 1* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | | |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |
| ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

***N 9-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. հմ.1920-Ն որոշման պահանջներով համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ տեղամասի 02-001-0523-0002 ծածկագրում գտնվող, Յուրիյ Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 2203քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը՝ ավտոգազալցաճնշակայան կառուցելու համար բնակավայրերի հասարակական կառուցապատման փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներկայացված գլխավոր հատակագծի փոփոխման առաջադրանքի նախագծին:
2. Հավանություն տալ Աշտարակ տեղամասի 02-001-0437-0064 ծածկագրում գտնվող, <ՍԵԴՈՒԼ> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 400քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը՝ հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու համար բնակավայրերի հասարակական կառուցապատման փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներկայացված գլխավոր հատակագծի փոփոխման առաջադրանքի նախագծին:
3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի Ձախ ափում գտնվող, գերեզմանոցի տարածքի ընդլայնման նպատակով 0.89հա բնակավայրերի նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներկայացված գլխավոր հատակագծի փոփոխման առաջադրանքի նախագծին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

| *ԿՈՂՄ - 12* | | *ԴԵՄ – 1* | *ՁԵՌՆՊԱՀ -1* |
|---|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

## N 10-Ն ՈՐՈՇՈՒՄ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1], 66, 67-70 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1–ին մասի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Համաձայնություն տալ գոյություն ունեցող հասարակական նշանակության օբյեկտի /վարսավիրանոց/ ընդլայնման համար կառուցապատման իրավունքով Ալիսա Բաղրամյանին
վարսավիրանոցին կից 14.8քմ հողատարածքը տրամադրելու 13 տարի ժամկետով՝ տարեկան 10000 ՀՀ դրամ վճարով:

3. Համաձայնություն տալ կառուցապատման իրավունքով <ՀԷՑ> ՓԲԸ-ին Արա-2 թաղամասում 20քմ հողատարածք տրամադրելու 30 տարի ժամկետով՝ տարեկան 50000 ՀՀ դրամ վճարով, ենթակայան տեղադրելու համար:

4. Համաձայնություն տալ համայնքի սեփականություն հանդիսացող 3քմ հողամասը ուղղակի վաճառքով օտարելու 845-012 ծածկագրում գտնվող հասարակական կառուցապատման հողամասի սեփականատիրոջը:

5. Համաձայնություն տալ համայնքի ավագանու 30.08.2012թ. հմ.7-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու՝ 5-րդ կետը կարդալ.

- Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող 3քմ խառը կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով օտարելու Տ. Մեծի փողոցի հմ. 42/4 հասցեում գտնվող խառը կառուցապատման հողամասի սեփականատիրոջը:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 13* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -1*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

## Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելուվայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակայիննշանակությունը | Հողատեսքը | Գործառնականնշանակությունը | Մեկնարկայինգինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Տ. Մեծի 42/1հասցեին կից | 845-006 | 10.6 | բնակ. | | հասարակական | 60 | |
| 2 | հողատարածք | Տ. Մեծի 4 շենքի հարևան. | 843-001 | 21.6 | բնակ. | | բնակելի | 60 | |
| 3 | հողատարածք | Տ. Մեծի 34 շենք տանող ճանապարհի աջ հատված | 135-004 | 56 | բնակ. | | հասարակական | 60 | |
| 4 | հողատարածք | Ձախ ափի գերեզմանոցի հարևանությամբ | 135-004 | 360 | բնակ. | | հասարակական | 60 | |
| 5 | 10 միավոր հողատարածք | Տ. Մեծի 25բ շենքի հարևան. | 106-001 | 24 | բնակ. | | բնակելի | 60 | |
| 6 | հողատարածք | Արայի տեղամաս | 465-001 | 8000 | գյուղ. | արոտ | | 100 | |

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*14-ը ապրիլի 2014թ.*

**2014Թ.-Ի ՄԱՐՏԻ 30, 31-ԻՆ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՈՒԺԱԾ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՆԱՍԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

***N 11-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով ցրտահարությունից տուժած հողերի սեփականատերերին աջակցություն ցույց տալու վերաբերյալ ՀՀ Կառավարության համապատասխան հանձնարարականը, համայնքի ավագանին*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել քաղաքապետարանի մասնագետների կողմից արված դիտարկումների արդյունքում ցրտահարված բազմամյա տնկարքների չափերը և վնաս կրած անձանց ցուցակը:

   *ա. ծիրանի այգի - 65հա*

   *բ. խաղողի այգի - 60հա*

   *գ. դեղձենու այգի - 8հա*

   *դ. սալորի այգի - 2հա*

   *ե. ընկույզի այգի - 7հա*

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետարան՝ համապատասխան ընթացք ստանալու համար:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ներքին
Բազմաբերդ համայնք, ՀՀ Արագածոտնի մարզ, գ.Ն.Բազմաբերդ ,

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ**
**ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ**
**ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ**

N 21
*18 ապրիլ 2014թ.*

Հարգելի պարոն Սահակյան՝ Ձեզ ենք ուղարկում Արագածոտնի մարզի Ն. Բազմաբերդի համայնքի , 2014թվականի ապրիլի 17-ին կայացած, ավագանու նիստի որոշումները :

Առդիր 8 թերթ

Invalid signature

X

**ԳՅՈՒՂԱՊԵՏ՝** **ԽԱՉԱՏՈՒՐ ՆՈՐԵՅԱՆ**